ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության

16.01.2024թ. **ք.Վանաձոր**

Մասնակցում էին

Հ.Ավետիսյանը- մարզպետի տեղակալ
Տ.Հովսեփյանը- մարզպետի խորհրդական
Կ.Աշրաֆյանը- մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար
Հ.Հալիվորյանը, Մ.Դալլաքյանը, Ռ.Պողոսյանը, Ա.Գրիգորյանը, Մ.Խեչումյանը, Ա.Թումանյանը, Կ.Ադամյանը, Ռ.Մարգարյանը, Է.Հախվերդյանը, Ա.Սահակյանը, Ա.Հակոբյանը, Ա.Բաղդասարյանը
Տ.Խաչատրյանը- մարզպետի օգնական
Է.Կոստանդյանը-մարզպետի օգնական

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. Մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարների կողմից նախորդ խորհրդակցությունից հետո կատարված և առաջիկայում կատարվելիք աշխատանքների վերաբերյալ:

(զեկ. մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ)

2. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

1. Առավել բարձր պատասխանատվություն դրսևորել ծառայողական պարտականությունների և հանձնարարականների՝ սահմանված կարգով և ժամկետներում կատարման ուղղությամբ:
2. Ստորաբաժանումների աշխատակիցների արձակուրդները և գործուղումները ձևակերպել սահմանված ժամկետներում և կարգով:
3. Ստորաբաժանման կողմից կամ միջոցով իրականացվող միջոցառումների և հանդիպումների վերաբերյալ նախօրոք տեղեկացնել աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը՝ տեղեկատվության ստեղծման և լրատվամիջոցներում տեղադրման իրականացման նպատակով:
4. Սահմանված ժամկետներում մարզպետի աշխատակազմի զարգացման, ծրագրերի մշակման և իրականացման բաժին ներկայացնել 2023թ. հաշվետվության համար պահանջվող տեղեկատվությունը:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

16/01/24

X

ԳՈՌ ԱՍՐՅԱՆ

Գ.ԱՍՐՅԱՆ

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99